ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի «Ռոսիա» հասարակական կազմակերպությանը տրամադրված 36.9 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 2017 թվականի նոյեմբերի 1-ը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ռոսիա» հասարակական կազմակերպության նախագահ, ռուսաստանյան հայրենակիցների համաշխարհային համակարգող խորհրդի անդամ, ՀՀ նախագահի աշխատակազմին կից ազգային և ազգային մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամ Յու.Յակովենկոն դիմել է Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի «Ռոսիա» հասարակական կազմակերպությանը տրամադրված 36.9քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնելու խնդրանքով:

Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայականի՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«Ռոսիա» հասարակական կազմակերպությունը հանդիսանում է առաջատար ազգային կազմակերպություններից մեկը, որը մեծ ծավալի աշխատանք է կատարում հայ-ռուսական կապերի ամրապնդման հումանիտար, մշակութային և կրթության ոլորտներում:

Քննարկվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով երկու տարի ժամկետով՝ մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը, տրամադրված է եղել վերոհիշյալ կազմակերպությանը:

Հաշվի առնելով համապատասխան աշխատանքային պայմանների ապահովման նպաստավոր նշանակությունն ազգային համայնքների գործունեության համար, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման ու կրթական զարգացմանն ուղղված հոգածությունը, ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի 36.9 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2017 թվականի նոյեմբերի 1-ը երկարացնելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեի վարչական շենքում գտնվող տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեի վարչական շենքում գտնվող տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ